

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնական ընդդիմախոսի Զարա Լեոնիկի Գրիգորյանի «Նիտրիլ խումբ պարունակող որոշ միացությունների դիմեթիլ-և դիէթիլ սուլֆոքսիդային լուծույթների ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունը» վերնագրով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 017 մասնագիտական խորհրդին՝ Քիմիական գիտությունների թեկնածուի «Ֆիզիկական քիմիա» (դասիչ Բ.00.04.) մասնագիտությամբ աստիճանի հայցման համար:

Լուծույթների քիմիայում կարևորագույն տեղ է գրավում երկկոմպոնենտ համակարգերի ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրությունը: Բինար համակարգերում իրագործվում են բաղադրիչների միջև փոխազդեցություններ, և կախված դրանց քանակական հարաբերակցությունից՝ համակարգը կազմող բաղադրիչների մոլեկուլների միջև կարող են առաջանալ ինչպես հոմո- այնպես էլ հետերոասոցիատներ: Ինչպես նմանատիպ համակարգերի բաղադրությունը, այնպես էլ արտաքին այլ գործոնները (ջերմաստիճան, ճնշում և այլն) էականորեն ազդում են այդ փոխազդեցությունների վրա, որն էլ և անդրադառնում է համակարգի ֆիզիկաքիմիական հատկությունների վրա: Եվ հենց դրանով են պայմանավորված ներկայացվող աշխատանքում բինար համակարգերի թերմոդինամիկական ուսումնասիրությունները, որոնք թույլ են տալիս պարզաբանել դրանցում տեղ գտած միջմոլեկուլային փոխազդեցությունները և դրանցով պայմանավորված բաղադրիչների ռեակցիոնակությունները: Աշխատանքում ուսումնասիրվող բինար համակարգերը ընդգրկում են այնպիսի բաղադրիչներ, որոնք ոչ միայն հայտնի օրգանական լուծիչներ են, այլ նաև այնպիսի միացություններ, որոնք լայն կիրառություն են գտել, ինչպես քիմիական արտադրությունում, այնպես էլ կենսաբժշկական ոլորտներում: Բացի նշվածից, այս համակարգերի ուսումնասիրությունները նաև գիտական հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ ընդգրկված բաղադրիչները ինքնասոսցվող բևեռային հեղուկներ են, որոնց միջև տեղ գտած փոխազդեցությունները անմիջականորեն և էական ազդեցություն են ունենում դրանցով կազմվող լուծույթների թերմոդինամիկական հատկությունների վրա: Նման համակարգերի ուսումնասիրությունը հնարավորություն կտա

կարգավորել այդ բաղադրիչների՝ նիտրիլ խումբ պարունակող միացությունների և սուլֆօբսիդների կոնցենտրացիոն հարաբերակցությունը, որն էլ կնպաստի տարբեր կենսաքիմիական պրոցեսների իրականացման համար նմանատիպ խառնուրդները որպես արդյունավետ միջավայր կիրառելուն: Այս հետազոտությունները կարևորվում են նաև լայնորեն կիրառվող պոլիմերների՝ պոլիակրիլոնիտրիլի, և ակրիլոնիտրիլի այլ համապոլիմերների համար լուծիչների ընտրության հարցում՝ պայմանավորված պոլիմերների որակական հատկությունների վրա տարբեր լուծիչների բնույթի և քանակի ազդեցությամբ:

Աշխատանքի նպատակն է բացահայտել նիտրիլ խումբ պարունակող ինչպես մոնոմերային, այնպես էլ պոլիմերային միացությունների հետ դիմերիլ- և դիէթիլ սուլֆօբսիդի փոխազդեցության օրինաչափությունները: Այդ ուսումնասիրությունները կատարելու համար ատենախոսը օգտագործել է տարբեր ֆիզիկաքիմիական եղանակներ:

Զարա Գրիգորյանի ատենախոսությունը շարադրված է 122 էջի վրա, պարունակում է 34 նկար և 16 աղյուսակ: Գիտական ցանկը կազմված է 197 անուն տպագիր հրատարակումներից:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, գրական ակնարկից, փորձարարական մասից, արդյունքների ներկայացումից ու քննարկումից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը:

Գիտական ակնարկում ատենախոսության հեղինակը ներկայացնում է համակարգը կազմող բաղադրիչների բնութագրական ֆիզիկաքիմիական հատկությունները, ինչպես նաև այդ բաղադրիչներով այլ համակարգերի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները:

Փորձնական մասում ներկայացված են աշխատանքում օգտագործված նյութերը, հետազոտման մեթոդները, անհրաժեշտ հավասարումները, որոնք օգտագործվել են արդյունքները մշակելու համար:

Արդյունքների քննարկման բաժնում ներկայացվել են չափումներից ստացված տվյալները և արդյունքները:

## Եզրակացություն

Զարա Լեոնիկի Գրիգորյանի «Նիտրիլ խումբ պարունակող որոշմիացությունների դիմեթիլ- և դիէթիլ սուլֆօքսիդային լուծույթների ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունը» կատարված է բարձր գիտահեղուտական մակարդակով:

Մասնագիտական խորը մակարդակով վճռել է դրված խնդիրը՝ հետազոտել քինար լուծույթների ֆիզիկաքիմիական հատկությունները: Հաշվի առնելով աշխատանքի նորարարությունը իմ կողմից չեն նշվում որոշակի հնարավոր ուղղումներ, որոնք հիմնականում ունեն ձևական բնույթ:

Զարա Լեոնիկի Գրիգորյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից Բ.00.04 “Ֆիզիկական քիմիա” մասնագիտության պահանջներին, իսկ հեղինակն անկասկած արժանի է “Ֆիզիկական քիմիա” մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի աստիճանի:

ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի  
անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի  
ավագ գիտ. աշխատող,  
ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածու՝

Գ.Ն. Սարգսյան

Գ.Ն. Սարգսյանի ստորագրությունը  
հաստատում էմ՝  
ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի  
անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի  
գիտքարտուղար



Ե.Գ. Գրիգորյան